

ԴԱՍ

ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

(գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման դաս)

(լաբորատոր ձևավորող թեստային աշխատանք)

աշխատանք.

Ուսուցիչ _____

Առարկան - Քիմիա		
Դասարանը – 7-րդ	Ուստարի – 2020-2021	Կիսամյակը – 2-րդ
Թեման	Ձևավորող թեստային աշխատանք ()	
Դասի նպատակը	<ol style="list-style-type: none"> 1. Ամրապնդել «Քիմիական ռեակցիաների տեսակները» թեմայից սովորողների ստացած գիտելիքները, կարողությունները և հմտությունները: 2. Ձևավորել նշված գիտելիքները ստանդարտ և անձանոթ իրավիճակներում ինքնուրույն կիրառելու, խնդիրներ լուծելու կարողություններ ու հմտություններ: 3. Նպաստել սովորողների՝ տվյալները վերլուծելու, հաշվարկներ կատարելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու, որոշումներ կայացնելու կարողությունների զարգացմանը: 	
Վերջնարդյունքները	Արդյունքում սովորողը պետք է կարողանա նախագծել «Քիմիական ռեակցիաների տեսակները» թեմայից լաբորատոր փորձեր, ձևակերպել լաբորատոր փորձի նպատակ, կատարել մեկնաբանություն և կազմել քիմիական ռեակցիաների հավասարումներ:	
Միջառարկայական կապերը	<i>Հայոց լեզու</i> - Կարողանա հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: <i>Հանրահաշիվ</i> - Կարողանա հավասարեցնել քիմիական ռեակցիաները:	
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Առաջադրանքների քարտեր, թեստային առաջադրանքի թերթիկներ:	
Ուսուցման մեթոդներ		

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ



Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի գործողությունները	Աշակերտի գործողությունները
1. Կազմակերպական մաս (2 րոպե)	Կազմակերպել դասի սկզբը:	Ողջունում է աշակերտներին, նշում բացականերին:	Ողջունում են ուսուցչին, պատասխանում են ուսուցչի հարցերին:
2. Տնային աշխատանքի ստուգում	Բացահայտել սովորողների գիտելիքների մակարդակը,	Հարցերի միջոցով պարզում է տնային աշխատանքի արդյունքները, տալիս է համապատասխան բացատրություններ, ցուցումներ,	Ներկայացնում են կատարած աշխատանքը, տալիս են հարցեր:

(5-7 րոպե)	առկա խնդիրները:	պատասխանում է հարցերին:	
3. Դասի թեմայի և նպատակի ձևակերպում (2 րոպե)	Ներկայացնել դասի նպատակն ու խնդիրները:	Դասի նպատակն է ձևավորող թեստային աշխատանքի միջոցով ամրապնդել և զարգացնել կապը տեսական գիտելիքների, գործնական կարողությունների ու հմտությունների միջև:	Ուշադիր լսում են ուսուցչին, տեսրում գրում են դասի թեման և նպատակը:
4. Անցած նյութի կրկնություն: (6-7 րոպե)	Արդիականացնել սովորողների գիտելիքներն ու կարողությունները:	Քննարկման միջոցով ամփոփում է նախորդ երկու դասերի ուսումնական նյութը՝ սովորողների հետ քննարկելով քիմիական ռեակցիայի տեսակները, սահմանումները, գործնական աշխատանքի ընթացքը, «լաբորատոր փորձի նպատակ» ձևակերպումը, մեկնաբանումը, փորձի արդյունքները: Գրատախտակին գրում է գրավոր աշխատանքի սկիզբը և ավարտը: Հանձնարարում է սովորողներին սկսել աշխատանքը:	Պատասխանում են առաջադրվող հարցերին, լսում ուսուցչի պարզաբանումները:
5. Գիտելիքների ամրապնդում (25 րոպե)	Ձևավորել ձեռք բերած տեսական գիտելիքները կոնկրետ իրավիճակներում կիրառելու կարողություններ:	Ուսումնասիրված նյութն ամրապնդելու նպատակով սովորողներին առաջարկում է գրել ձևավորող թեստային աշխատանքը: Աշխատանքը ներառում է ճիշտ պատասխանի ընտրությամբ մի քանի առաջադրանքների լուծում (ուսումնական նյութ N...): Սովորողների ուշադրությունը հրավիրվում է այն հանգամանքի վրա, որ ճիշտ պատասխանն ընտրելիս պետք է մանրամասն քննարկել պատասխանների բոլոր տարբերակները: Բաց պատասխանով առաջադրանքներ: Հմտությունները և կարողությունները տարբեր իրավիճակներում ստուգող երկար	Սովորողները կատարում են տրված առաջադրանքները:

		պատասխանով առաջադրանքներ:	
8. Տնային հանձնարարություն (2 թույլ է)	Ներկայացնել տնային առաջադրանքը:	Հանձնարարում է տանը գրել քիմիական ռեակցիաների օրինակներ: Կարող են տրվել նաև առաջադրանքներ, որոնք սովորողները կարող են կատարել ըստ ցանկության:	Գրանցում են հանձնարարությունները:
7. Անդրադարձ (1 թույլ է) կամ Մյուս դասին (2-3 թույլ է)	Ամփոփել դասը: Իսկ վերլուծությունը և գնահատումը կատարվում է մյուս դասին:	Ուսուցչի ցանկությամբ՝ մյուս դասին կամ տնային առաջադրանք: Սովորողներին տրվում են հետևյալ հարցերը. - Օգտակար էր արդյոք այս դասը ձեզ համար: - Ո՞ր հարցերն էին դժվար: - Ի՞նչ սովորեցիք այս դասին:	Պատասխանում են տրվող հարցերին, ներկայացնում առաջարկություններ:

Ձևավորող թեստային աշխատանք

Չափանիշ՝ (նախագծում և հետազոտություն), 10 միավոր

<p>1. Գործնական աշխատանքի նպատակը</p> 	
<p>2. Նյութեր և սարքավորումներ</p> 	<p>❖ Գրե՛ք նյութերի քիմիական բանաձև(եր)ը և անվանում(ներ)ը:</p> <hr/> <p>❖ Գրե՛ք սարքավորումները</p> <hr/>
<p>3. Դիտարկումներ</p>	<p>❖ Փորձերի ընթացքում ռեակցիա(ներ)ի ի՞նչ հատկանիշ(ներ) նկատվեցին:</p>

5. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների տեսակները և քիմիական հավասարումները.

ա. միացման



բ. քայքայման



6. *Լրացրե՛ք բացթողումները.*

- ❖ Քայքայման է կոչվում այն ռեակցիան, որի ժամանակ մեկ ----- նյութի քայքայումից ստացվում են ----- կամ ավելի նյութեր:
- ❖ Միացման է կոչվում այն ռեակցիան, որի ժամանակ ----- կամ ավելի նյութերից ստացվում է ----- նյութ:

7. Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական ռեակցիայի ընթացքի վերաբերյալ: *Պատասխանները հիմնավորել:*

1. Ատոմների ընդհանուր թիվը փոխվում է:
2. Նյութերի գումարային զանգվածը մնում է հաստատուն:
3. Բոլոր այրման ռեակցիաների ընթացքում անջատվում է լույս և ջերմություն:
4. Միացման ռեակցիաների ելանյութերից մեկը պարտադիր թթվածինն է:

	1	2	3	4
Ճիշտ է				
Միայն է				